ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 62

02 մայիսի 2013 թվական

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 68 ԱՄՅԱԿԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐԱՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 17 կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. 2013թ. մայիսի 9-ին Մարալիկ քաղաքում միջոցառում կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.
   Հանձնաժողովի նախագահ - Գ. Գրիգորյան (գլխ. մասնագետ)
   անդամներ - Ա. Սաղաթելյան (գլխ. մասնագետ հաշվապահ)
   Մ. Անտոնյան (Մշ. երիտ. կենտ. տնօրեն)
   Ս. Սարոյան (մանկապատանեական մարզ.դպր. տնօրեն)
2. Քաղաքապետարանի գլխավոր մասնագետ՝ հաշվապահ Ա. Սաղաթելյանին. միջոցառման կազմակերպման և նվերների ձեռքբերման համար հատկացնել 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ 2013 թվականի բյուջեի վարչական մասի 08.2.4.51 դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից:
3. Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 63

02 մայիսի 2013 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետ՝ության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով ***որոշում եմ***

1. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 2-րդ եռամսյակի 2000000 (երկու միլիոն) թիվը փոխարինել 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) թվով, 3-րդ եռամսյակի 2300000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) թիվը փոխարինել 1800000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածի 2-րդ եռամսյակի 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) թիվը փոխարինել 1700000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) թվով, 3-րդ եռամսյակի 1400000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) թիվը փոխարինել 1900000 (մեկ միլիոն ինը հարյուր հազար) թվով:
3. Գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթելյանին.
   Նախահաշիվների և ժամանակացույցների մեջ կատարել նշված փոփոխությունները:

Քաղաքապետ՝ **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 __ թ. _____ ____
ք.Մարալիկ